

# ՀԱՐԱՃՈՒՄ

Ընթերցանության ժամանակ՝ 3 րոպե

Հարաճում նշանակում է, որ եթե Հայաստանի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն տարեկան աճի մոտ 10% -ով, ապա այն 2020 թ.-ի 4,000 ԱՄՆ դոլարից կբարձրանա ավելի քան 20,000 ԱՄՆ դոլարի 2041 թ.-ին: ՀՆԱ-ի և բնակչության աճի տարբեր սցենարների համար տե՛ս ստորև բերված աղյուսակներ 1 և 2:

Աղյուսակ 1. ՀՆԱ-ի սցենարները 2041 թ.-ի համար

Բնակչության աճի տեմպը	ՀՆԱ-ի սցենարները 2041 թ.-ի համար			
	1%	2%	3%	4%
Բնակչությունը 2041 թ.-ին	3,660,570	4,457,842	5,418,334	6,573,369
Արտադրողականության աճի տեմպը				
3%	\$24,102,354,573	\$29,186,274,757	\$35,278,490,194	\$42,566,529,087
4%	\$29,186,274,757	\$35,278,490,194	\$42,566,529,087	\$51,270,528,582
5%	\$35,278,490,194	\$42,566,529,087	\$51,270,528,582	\$61,648,518,446
6%	\$42,566,529,087	\$51,270,528,582	\$61,648,518,446	\$74,002,499,443
7%	\$51,270,528,582	\$61,648,518,446	\$74,002,499,443	\$88,685,426,897
8%	\$61,648,518,446	\$74,002,499,443	\$88,685,426,897	\$106,109,224,026
9%	\$74,002,499,443	\$88,685,426,897	\$106,109,224,026	\$126,753,965,412
10%	\$88,685,426,897	\$106,109,224,026	\$126,753,965,412	\$151,178,388,590

**Թարգմանություն.**  
Բնօրինակը  
անգլերենով է



**FUTURES STUDIO**

Think to connect!

Աղյուսակ 2. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի սցենարները 2041 թ.-ի համար


	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի սցենարները 2041 թ.-ի համար			
Բնակչության աճի տեմպը	1%	2%	3%	4%
Բնակչությունը 2041 թ.-ին	3,660,570	4,457,842	5,418,334	6,573,369
Արտադրողականության աճի տեմպը				
3%	\$6,584	\$6,547	\$6,511	\$6,476
4%	\$7,973	\$7,914	\$7,856	\$7,800
5%	\$9,637	\$9,549	\$9,462	\$9,379
6%	\$11,628	\$11,501	\$11,378	\$11,258
7%	\$14,006	\$13,829	\$13,658	\$13,492
8%	\$16,841	\$16,601	\$16,368	\$16,142
9%	\$20,216	\$19,894	\$19,583	\$19,283
10%	\$24,227	\$23,803	\$23,394	\$22,999

Աշխարհի ցանկացած տնտեսություն ունի պոտենցիալ (կամ առավելագույն) աճի տեմպ: Այս պոտենցիալ աճի տեմպը բաղկացած է ընդամենը երեք բաղադրիչներից. բնակչություն, կապիտալ և արտադրողականություն:

Դիցուք Ա երկիրը տարեկան 3.0% աճ է արձանագրում՝ ՀՆԱ-ի ցուցանիշներով: Եթե տվյալ երկրի բնակչությունը ևս տարեկան աճում է 3.0%-ով, ապա երկրի արտադրողականությունը չի աճում (0.00%):

Երբ մենք խոսում ենք արտադրողականության մասին, կարիք չկա նայելու արտադրողականության կոնկրետ չափանիշներին, ինչպիսիք են արտադրանքը մեկ աշխատողի հաշվով, քանի որ, ինչպես ցույց է տրված Գծապատկեր 1-ում, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը մեծապես կապված է արտադրողականության աճի հետ, ինչը նշանակում է, որ ամեն անգամ, երբ մենք ցանկանում ենք չափել արտադրողականության աճը, մենք պարզապես կարող ենք դիտարկել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը որոշակի ժամանակահատվածում, որը սովորաբար 10-15 տարին է:

Գծապատկեր 1. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը արտադրողականության աճի չափման այլընտրանքային ցուցանիշ է




Աղբյուր՝ World Bank, International Labour Organization

Կան մի քանի գործողություններ, որոնք Հայաստանը կարող է ձեռնարկել՝ հարաճում ունենալու համար.

- Հայաստանում սրընթաց արտադրողականության աճի ապահովումը համեմատաբար հեշտ է. քանի որ Հայաստանի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով դեռևս փոքր է (շուրջ 4 հազար ԱՄՆ դոլար): Ներքևից բարձրանալը ավելի հեշտ է՝ պարզապես կրկնօրինակելով այլ երկրների լավագույն փորձը:
- Դրամավարկային քաղաքականությունը տնտեսական բարեկեցության ամենաանտեսանելի, այդուհանդերձ ամենահզոր շարժիչ ուժերից մեկն է: Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, Հայաստանում եղած տոկոսադրույքները չափազանց սահմանափակող են և զսպում են տնտեսական աճը: Հայաստանի կենտրոնական բանկը կարևոր դերակատարություն ունի և կարող է միջամտել տոկոսադրույքների իջեցմանը:

Գծապատկեր 2. Գնաձև, վերաֆինանսավորման տոկոսադրույք և վարկավորման տոկոսադրույք



Աղբյուր՝ Central Bank of Armenia

- Հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության տրամադրության տակ գտնվող մեկ այլ շատ հզոր գործիք է: Հայաստանի կառավարությունը կարող է օգտագործել պետական-մասնավոր գործընկերության տարբեր մեխանիզմներ և գործիքներ նորարարական և ստեղծագործական նախագծեր իրականացնելու համար:

*Դավիթ Թամադյան  
Հիմնադիր գործընկեր*

## Դրույթներ և պայմաններ

### © «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: